

ՍՄՐԱՍ ԲԻՐՈՍ  
ՆԱԲԱԳՐՈՒՅԻԼԸ «ՓԻԻՆԻԿ» Ի  
Ալեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
Ն. Ր.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆ  
ԿԱՆԽԻԿ Է  
Ձեռագիր ես յ'դար-  
ձուիք

# ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ  
ՏՐ.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6  
Ազդեր կ'ընդուն-  
ուին մասնաւոր  
պայմաններով

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԼԻՆԳՎԵՍՏԻԿ, ԿԻՐՍԿԻ առաւօտները

### ՄԱՄՈՒԼԸ

Ահա՛ տեղական ազգային հարցը նսրէն կը յուզուի:

Երկա՛ր տեեց արդէն լուսթիւնը, երկա՛ր թագաւորեց անշարժութիւնը, որ կամաց կամաց կը սպաննար պատրաստել ժողովորդին լծացումը, չ'ըսելու համար բարոյական փճացումը:

Ողջո՛յն ուրեմն Ազատ Բեմին, թէև քիչ մ'ուշ:

Դեռ «Ազատ Բեմ» չը տեսած, լսեցինք արդէն «Ողջոյն Ազատ Բեմին» ազգային ազգ. գրականութեան նախանձուր փրքոցուոյց կուրծքէ մը փրթած:

Օ՛, լրագրութեան խաչագողները. դո՛ւք, անպատկաս իմաստակներ, դո՛ւք հրապարակային խաբեքներ, դո՛ւք, հայ լեզուին ու բերասկանութեան վանտախները, ճաշակին ու իմաստին խաթարիչները, հերի՛ք ապականեցիք հրապարակը...:

Ազատ Բեմին ողջոյն բերող անուանի գրագէտը գրիթէ ա՛յս բառերով ներս մտաւ Ազատ Բեմէն, որ սակայն ազատ Մեմ մը

կը խոստանայ գտնալ, ա՛յնքան ազատ է մուտքը:

Իրա՛ւ, ողջո՛յն Ազատ Բեմին:

Տեղական խնդիրներուն ցովէն պիտի չ'անցնէր. ա՛յս էր իր հաւատոյ հանգանակը:

Տեղեկութեանց ու զուտ գրական թերթ մը պիտի ըլլար. ա՛յս էր իր ուխտը, առաջի մամուլին:

Եւ սակայն, իր ուղղութեան ջատագովականներովը մէկէ աւելի անգամներ լեցուցած թիւերուն յաջորդեց քիչ յետոյ «Զիրենիկն Ոսրը», կէս-խմբագրական մը, որ մէկ ծայրէն միւսը, սանձարձակ արշաւանք մըն էր դէպ ի տեղական խնդիրներուն սահմանները:

«Զիրենիկն Ոսրը», չ'էր կրնար բերել հաշտութիւն (ըստ ՅՅ ՅԻ՛ իւսուղադում). այդ ոտուր կը ծառայէր իրրե կոթ սապարի մը, որ կրնայ գործածուիլ լոկ սապարելու համար ցեղին շարժումն ու կենդանութիւնը խորհրդանշող ամեն կանաչ ծառեր, որոնք պտուղ կը խոստանան:

Մամուլը՝ անկախ, ազատ ու անկաշտ պիւրջովն աւ իր ցեղին օգտաբեր դերովը հը-

պարտ, պիտի չը թերանայ երբէք, երբ կարգը ներկայանայ, ճշմարտութեան ու արդարութեան համար, ձայնը բարձրացնել:

Իսկ Փիլանիկը, որ տեղական ազգային վերածնութիւնը պատրաստող այնքան ազնիւ ու այնքան եռանդուն շարժումները քաջալերեց, չ'ըսելու համար գնահատեց, նոյն Փիլանիկը կը փութայ այսօր իր առաջին էջերուն մէջ հիւրընկալել իր մեծայարդ աշխատակից Տիար Միհրան Տամատեանի «Պայխուրը եւ Չիթենիին ուսը», խորագրով կարեւոր յօդուածը որ ծայրէ ծայր տրամաբանութիւնն է ու խորունկ հմտութիւնը մեր ազգային կեանքին:

## ՊԱՅՔԱՐԸ

Ե Ի

### ՉԻԹԵՆԻԻՆ ՈՍՏԸ

«Ազատ Բեմ»ը տեղական խնդիրներով չպիտի զբաղի. — այս էր առջի օրէն այս նոր թերթի խմբագրութեան յանկերպը. նոյնը հանդիսատրապէս կը յայտարարէր թերթին Յերոզղ համարին «Մեր Ուղղութիւնը» խումբագրականը. արդէն թերթին մէկ քանի համարներուն պարունակութենէն ալ նոյն բանը լաւ հասկցուած էր: Օրինակի համար, Պատրիարքարանէն Եգիպտոսաբնակ երեւելի Հայու մը հասած շատ քննադատելի նամակի մը մէկ հատուածը արտագրուած էր «Ազատ Բեմ»ին մէջ, առանց բառ մ'աւելցուելու խմբագրին կողմէն, ընդհակառակը «Առանց Մեկնաբանութեան» նշանակալից խորագիրը դրուած էր վրան:

Թերթին այս ձեռնպահութեան դէմոյննչ ունէինք ըսելու: «Ազատ Բեմ»ը ազատ էր իր ուղած ուղղութիւնը որդեգրելու. շատեր նաև պիտի կուտային թէ մեր յարգելի բարեկամ Տիար Ե. Օտեան իր Ազատ Խօսքին Աղէքսանդրիա հրատարակուած բոլոր համարները ծայրէ ծայր տեղական հարցերը

շօշափող այնքան սիրուն յօդուածներով լեցնելէն վերջը, հիմա ա'լ ձանձրացած ըլլալու է այդ կարգի խնդիրներով զբաղելէ, ուստի կ'ուզէ տարբեր ուղղութիւն մը տալ «Ազատ Բեմ»ին:

Բայց մեծ եղաւ մեր զարմանքը երբ նոյն թերթի Երկ համարին մէջ տեսանք շ շ շ. ստորագրութեամբ և «Չիթենիին ուսը» վերնագրով նախալոյսած մը, որ պաշտօնական շեշտով մը անգամ մ'ալ կը կրկնէր արդէն բաւականաչափ յեղյեղուած սա յանկերպը թէ՛ «Ազատ Բեմ»ը տեղական խնդիրներով չպիտի զբաղի»: Աւելի զարմանալիս այնքան սակայն որ տեղական խնդիրներով զբաղելէ այնքան խորշոզ յարգելի յօդուածագիրը (անդգալարա՛ր ըսենք) չափէն աւելի կը խորասուզուի նոյն այդ հարցերուն մէջ, անոնց վերլուծութիւնը կ'ընէ և մինչև իսկ կիջնէ պատճառներու «լուսնադալի», հետազօտութեան և կը հասնի եղբակացութիւններու որոնք այնքան անհեթեթ են որքան վճռական:

Արդարեւ, դժուար է գտնել զրոյթիւն մը որ այնքան հարեանցի կերպով շօշափած խնդիրներուն վրայ այդքան տիրաբար վճիռ արձակէ: Երբեք պատմութիւն մը այսքան սխալ կուտանի վրայ դրուած չէր. երբեք իրողութիւններ այսքան չարաչար մեկնութեան ենթարկուած չէին:

\* \* \*

Յօդուածագիրը «երեք տարի անընդհատ» յուզող տեղական հարցին և անոր շարժառիթներուն մէջ արիշ բան չի տեսներ, բայց միայն չարեք. մէջ բերենք իր իսկ բառացուցակը.

«Ատելութիւնը, կուտակեցական կիրքերն ու անձնական հակառակութիւնները», «տրտոր երկպառակութիւններ», «մտքերու կուրացում», «սրտերու խտտացում» «աատելութեան պայթում», «հայկականան միութիւն», [\*] «վէրք», «խոցոտ խնդիրներ», «վազանցիկ մտորութիւններ», «տխուր անցեալ մը», «մտաւոր հիւանդոտ վիճակ», վերջապէս՝

(\*) Ուղած ատենը, հայկական ողջմտութիւն. Ծ. 70.

«Անխնայաբար կարծիքներ ու թիրիմացութիւններ, անհասկացողութիւն ու կասկածանք, կարծրամտութիւն ու ամբարհուսումնութիւն, նեղմտութիւն ու աններդողութիւն, փոքրզգութիւն ու նախանձ, դիւրագրգռութիւն ու սնափառութիւն, բարեկրթութեան պակաս ու հակառակասիրութիւն (եւ մասնաւորապէս Արտիստիկ), — ահա անխնայ ժահրոտ ստիճանները որոնցմէ սնու ու պարարտացաւ հեռն ու ատելութիւնը մեր մէջ»:

Եւ այս ամենը կը ներկայացուի իբր «Հայոց պատմութեան շարունակութիւնը Եգիպտոսի մէջ»<sup>ԲԲԲ</sup>:

Իրերը քիչ շատ հիմնաւոր կերպով ստույգասիրող, պատմութեան սգիին և բարեշնչումի օրէնքներուն քիչ շատ թափանցող ու և է մէկը՝ այս ամէն խնդիրներուն մէջ պիտի տեսնէր Եգիպտահայ գաղութին ազգային, մտաւոր, բարոյական և ընկերական զարթնումին և տակաւ զարգացումին յայտարար նշանը, Ժամանակակի նշան մը, հետեւաբար դերազանցապէս ուշագրաւ և խրախուսիչ երեւոյթ մը պիտի նկատէր. մէկ խօսքով իբր յառաջդիմական շարժում մը պիտի ողջունէր ու արձանագրէր զանոնք:

Արդարեւ ամենէն խաղաղ ու աստիճանաւոր զարգացումն իսկ, այսինքն բնաշնչումը կամ բարեշնչումը, բոլորովին անարգել և դիւրահեշտ կերպով տեղի չ'ունենար. դէպ ի յառաջդիմութիւն ամենէն աննշան քայլափոխներն անգամ ընդդիմութեան, խոչընդոտներու կը բաղխին յետադիմական տարրերու կողմէ, որոնք ամեն ազգի և ամէն ժողովրդի մէջ կը գտնուին: Մարդկային կեանքը՝ այս տեսակէտով ալ շարունակական պայլաւ մ'է:

Խօսքս գաղափարներու, սկզբունքներու և համոզումներու ամենօրեայ խուլ պայքարին վրայ է, և ոչ թէ այն բուն պայքարներուն վրայ որոնք վիճակի և դրութեան յանկարծական և արմատական յեղաշրջում առաջ բերելու սահմանուած են և որոնք, իբր բացառիկ միջոց միայն ի յայտ կուգան ազգերու պատմութեան որոշ շրջաններուն և վճռական րոպէներուն մէջ:

Այսպէս ուրեմն պայքարը գրեթէ միշտ համանիշ է շարժումի, յառաջդիմութեան. առանց ճիգի, առանց մրցումի, առանց պայքարի ու մարտումի՝ յառաջդիմութիւն չկայ: Այս հայեցակետն է որ պէտք է դիտուի, ուսումնասիրուի Պատմութիւնը — ամեն պատմութիւն, Հայոց Պատմութիւնն ալ, տեղական (ըստ շ շ շ ի միջակ, ըստ մեզ կենսական) հարցերու պատմութիւնն ալ: Առանց այս իմաստասիրական հայեցակետին, Պատմութիւնը մեր աչքին իբր ուրիշ բան չի ներկայանար բայց միայն պատերազմներու, աղէտներու, սճիրներու և նախճիրներու անվախճան շարք մը՝ որուն վրայ ողբալու համար ոչ միայն չ'է չ'ի բառերու ճոխ պաշարը, այլ Երեմիայի և Լաստիվերտացիի եղբերգութիւններն անգամ անբաւական պիտի ըլլային:

Պէտք չէ արհամարհենք մանաւանդ մեք տոհմային պատմութիւնը՝ Հայոց պատմութիւնը՝ որ արձանագրուած երկպառակութիւններն իսկ շատ անգամ մեր յառաջդիմական ձգտումները կը պատկերացնեն և որ անպակաս են շինիչ և հրահանգիչ օրինակներ, որոնք դեռ երկար ժամանակ կրնան մեզի իբր ներշնչարան ծառայել:

Հայոց պատմութիւնը իբր հայկական անմիտութեան կենդանի յիշատակարանը ճանչնալը՝ շատ հինցած ու վաղուց հերքուած տեսութիւն մ'է, որուն մէջ դեռ յամուրի կենալը՝ քննական ոգիի անընդունակութիւն կը նշանակէ:

Ժամանակակից Ֆրանսան տարիներէ ի վեր Տրէյֆիսի խնդրով պառակտեցաւ, հիմա ալ կրօնական Միաբանութեանց, Եկեղեցիի և Պետութեան անջատումի խնդիրներով վերէն վար յուզուած է. յուզում, որուն մէջ անխուսափելիօրէն ծայրայեղութիւններ ալ տեղի կ'ունենան երբեմն: Ֆրանսական այս յուզումները իբր մտքերու կուրացում, սրտերու խստացում, ատելութեան պայթում ու սև կիրքերու պոռթկացում պիտի մեկնենք, թէ հին և նոր գաղափարներու իբր անտեղիտալի ընդհարում մը, իբր յառաջդիմութեան

սովորական մէկ երևոյթը, և հինէն զէսի նորը փոխանցումի համար իբր անհրաժեշտ մաքառումներ:

Նսինպէս, Ազգային Սահմանադրութեան հաստատութեան առթիւ Հայոց մէջ տեղի ունեցած վէճերն ու երկպառակութիւնները հակառակասիրութեան ու նախանձի՛ արդիւնք պէտք է նկատուին թէ՛ հիւն գլուխներու և նոր գլուխներու իրարու բազմումը, մեր ազգային կեանքին մէջ նորագոյն առողջ սկզբունքներու պատուաստումին առթիւ առաջ եկած անխուսափելի տենդն ու ցնցումը: Պիտի այսպանե՞նք այդ յուզում և շարժումները որոնք Ազգը Սահմանադրութեամբ օժտեցին, վերջ գնելով ամիրայական դրութեան: Եթէ մեղադրենք ու այսպանենք իսկ՝ հիւն գլուխները—խառնուրդները— չէ՛ որ պէտք է մեղադրենք, փոխանակ յուսաւորեալները մեղադրելու, մեր ազգային կեանքի բարենորոգումին արիաբար աշխատելուն համար:

Իսկ այստեղ, նման զէպքեր ու երևոյթներ բոլորովին խտտորնակ և հակասանայ կերպով կը մեկնաբանուին:

Ժամանակ մը, երբ Եզիպտոսի հայ գաղութը, արդէն թուով ալ գեռ աննշան, տեղային «միջակ», հարցերով չէր շահագրգռուեր, ու մատի վրայ համրուող անձնաւորութիւններ իրենց մենաշնորհ ըրած էին ազգային գործերու անպատասխանատու ղեկավարութիւնը, արտասահմանի մամուլն էր որ, իրաւամբ, կը ձաղկէր Եզիպտահայոց անտարբերութիւնը: Եկաւ ժամանակ, երբ աւելի առողջ արիւն մը ներարկուեցաւ Եզիպտահայ գաղութին երակներուն մէջ, ու անիկա, ա՛լ հիմա թիւով ալ շատոր, սկսաւ կենդանութեան և շարժումի նշաններ ցոյց տալ, սկսաւ իր ազգային, վարչական և օրինական իրաւունքներուն գիտակցաբար աէր կանգնիլ. ուղեց իր գործերուն ղեկավարութիւնն և ազգային հարստութիւններու մատակարարութիւնն ազատել կամայականութեան ճիրաններէն ու մտցնել օրինաւորութեան շաւղին մէջ. ամիրայական սակա-

ւապետութեան (օշիկարշի) և Ենիշէրիական դրութեան զէմ ժողովրդի կամքին գերակշռութիւնն և Օրէնքին գործադրութիւնը պահանջեց. — և ահա այս անգամ ալ տեղացի երեկներէն ամբաստանուեցաւ իբրև ընթրոս, խռովութար, սևնուպոյ:

Իսկ այսօր, երբ դեռ ամիրայական յաւանութիւնները բարձրագոյն կը թաղաւորեն, երբ սմիրաներու և սմիրացոյններու թիւը կ'աճի. երբ տակաւին ազգային իշխանութիւնը կը շարունակէ մնալ օրէնսով սևնուպոյ և՛ ինքիւր մէջ իսկ՝ մեծամասնութիւնը կորսնցոյցած հանգամանքով՝ կըրկնակի ապօրէն ու յուժուած և բացարձակապէս պաշարուող, Ենիշէրիական ու Ենիշէրիական վիժած մարմինի մը ձեռքին մէջ, յարգելի Շ Շ Շ. բոլորովին անտես կառնէ այս բանաբարութեան զէմ մինչև հիմա մղուած և ասկէ վերջ ալ մղուելիք որքան ազնիւ ու պատուաբեր նոյնքան կարևոր և անհրաժեշտ պայքարին մէջ բովանդակուող սկզբունքի, համոզումի մեծ ինդիւնները, ազգային շահերու և օրինական տրամադրութիւններու նախանձախնդրութեան աւագ և բարձրագոյն շարժառիթները, ու ինք բոլոր գործին մէջ անձնական կիրք և ստեղծութիւն միայն կը աեսնայ, ու կ'ողբայ:

Կամայականութեան զէմ միահամուռ կազմակերպուած բողոքներուն (քնտրական պայքար, զիմումներ, ցոյցեր, միթիւններ, հանրագիրներ) բուն նշանակութիւնը բոլորովին կ'անտեսէ կամ կը ջանայ նսեմացնել Շ Շ Շ. փոխանակ գնահատելու այդ առիթներով Աղեքսանդրիոյ հայ գաղութին կարծուածէն և սպասուածէն աւելի երևան բերած համերաշխութեան և ինքնագիտակցութեան ու գին. ժողովուրդը կը ներկայացնէ իբր անգիտակից գործիք մը մէկ բանի զերակատարներու ձեռքին մէջ:

«Ժողովուրդի արի մարդը ձայն բարձրացուց ու գաւազանն ալ. ձեր կարծիքէն էր պարզամիտ մարդու կը, զի ինձմէ առաջ, առաւօտուն զուր իրեն խօսեր էիք, Պա՛րոն.»

«Կեցցէ խնամակալոյ թիւն» պտուղացի

Գուշճու Աբրահամներու, Ղամսըզ Յուսէփներու և Մեռնսըզ Ալեաթիներու կրնան պատշաճիչ այդ սուղերը, բայց ոչ երբեք Աղեքսանդրոյ օրինասէր հայ հասարակութեան զրեթէ ընդհանրութեանը, որ՝ հակահակ ամեն սպառնալիքներու՝ Բիրամիտ թատրոնին մէջ համախմբուած՝ միաձայնութեամբ ունզոյ հոշակեց այդ վիժած մարմինը:

ՀՀՀ ոչ միայն ինք չի լարեհաճիր այս յառաջդիմական շարժման նպաստաւոր բառ մը արտասանել, այլ ընդհակառակը բարձրէն լուտանքներ կը սեղաշնէ այդ հարցով շահագրգռուողներուն և այլ հարցը յօգուց մամուլին գլխին:

«Թող տրիշ թերթեր շահաքորճեն կուսակցական կրքերն ու անձնական հակառակութիւնները զոր հրահրել արհեստնին է: Ազատ Բեմը չնախանձիր տղրակներուն, ու յաճախ առիթ պիտի ունենայ ծիծաղելու անոնց վրայ վախնալով որ մի գուցէ լայ:»

Իսկ իր հաւատոյ հանգանակն է՝ ժողովուրդին ու մամուլին վերաբերութեամբ՝ **ԲԱՆ ՄԸ ԶԸՆԵԼ**— *il dolce far niente !!!*

«Ազատ Բեմը չպիտի դպի ազգային տեղական խոցոտ խնդիրներուն, զ/ս պէճֆ շէ դպիլ վե՛րհերու (այլ թողո՛ւլ որ փտտին) և զի մանաւանդ, շատ պարագաներու մէջ, «մեծագոյն իմաստութիւնը **ՈՉԻՆՉ ԸՆԵԼՆ Է**»: Ի՛նչ հրաշալի ըմբռնում մամուլի գերին...»

Այս միտական վարդապետութենէն մեկնելով, լեցուն հաւատքով հայկական ողջմըտութեան վրայ, պատրաստ ողջունելու «միաբանութեան վերածնունդը», այսինքն վերկենցալուժը Եգիպտահայերու բացարձակ անտարբերութեան հին բարի ժամանակներուն, հրճուանքով կը զիտէ առերևոյթ զինադադարը—«որ աւելի խաղաղուժի կը նմանի. զի վերջապէս պէտք է հաւատալ թէ ատելութիւնն ալ կը յոգնի. մեր քաղաքին մտաւոր հիանդոտ վե՛րհերը ապաքինման նշաններ ցոյց կուտայ ուրեմն:»

Այս սիրուն ու պատիր երևոյթէն ոգեարուած և արբշխ, ատելութեան գործակալները լիա-

թոր ձողկելէ վերջը, *ձիթեմիիկն ուսդ ձեռքին մէջ վերամբարձիկ՝* կը սկսի երգել հաշտութեան, խաղաղ(աց)ումի և համերաշխութեան ազուոր երգը, որ վերը տեսնուած իր բացատրութիւններէն վերջը՝ Հանգստեան Շարահանի մեղձօրօր սպասուրութիւնը կը թողու:

Մենք հեռի ենք հետևող ըլլալէ՝ անզգայութեան, անտարբերութեան, անգործութեան, անշարժութեան, անպամալուծութեան ու մեռելութեան առաջնորդ այդ գեղեցմանական փիլիսոփայութեան. մենք կը փափաքինք ընդհակառակը, որ մեր համայնքը ինչպէս և մեր գաղութը, հանդիսանայ տիպարը կենդանի, թարմ, ողորտալ, խանդավառ, զիտակից, պարտաճանաչ, իրաւապահանջ, գործունեայ և յառաջդիմասէր հասարակութեան մը:

Չե՛սք արհամարհեր՝ Ա. Պօլոս Պեարոս եկեղեցոյ շրջափակը և անոր շուրջ պարձող խնդիրները, որոնք կը հաւատանք թէ պիտի յանգին վերջապէս եգիպտահայ վարչական զրութեան կենսական խնդրին վերջնական և օրինական կարգադրութեանը՝ կրամայականութեան բարձմամբ:

Եւ այն ատեն՝ միայն, երբ այլևս վերջնականապէս դադրին ընուելէ «Ալիւրայ եմֆ մեֆ» խլացոցիչ և սպանալից յոխորտանքները, այն ատեն՝ միայն՝ Չիթենիի ոտ ի ձեռին՝ իրապէս սիրոյ և միութեան ողջայնը սիրտի տանք միմեանց և հնչեցնենք «Եղբայր եմֆ մեֆ»ը անուշ ու փոփոխ Պէշիկթաշիանին:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

### ԱԶԳԱՅԻՆ

#### ԱՀՌԵԼԻ ԳՈՅԺ ՄԸ

Ճամբան ուշացած հեռագիր մը, Կ. Պոլսէն ամսոյս 28ին հաղորդուած, կը գուժէ թէ՛ Ապրիլ 29 ին Հայաստանի Մանագիկերտ քաղաքը կործանած է երկրացունցէ:

Ամբողջ ժողովուրդը, 2000 բնակիչ մեռաւ...»

—Երկու հայ սխմասրներ. Կիմա-  
նանք թէ բաղբիս հայ սխմասրներէն եր-  
կու շնորհալիներ, իրենց շահամուրթներն  
մղուած, նամակներ կը զրկեն թուրքիոյ  
նաւահանգիստներուն ոստիկանութեանց,  
մասնելով հոն վերադարձող հայ ճամբորդ-  
ները: Այս նկատմամբ քննութիւն բացած  
ենք և պիտի հրատարակենք արդիւնքը, հի-  
մակուրնէ մեր ճամբորդ հայրենակիցները  
զդուշացնելով այս նոր պատուհասներէն:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԹՈՒՐ-ՔԻՍ ԵՒ ՊՈՒԼԿՈՐԻՍ

Պուլկարական նոր կառավարութեան ծը-  
րագիրը կը կայանայ թուրքիոյ հետ բարուք  
համաձայնութիւն մը պահպանելու մէջ, Մա-  
կեղոնիոյ պուլկարներուն բազմ բարեկաւելու  
նպատակով: Այս ծրագրին համաձայն,  
պուլկար կառավարութիւնն արդէն զիմուսներ  
ըրած է Դրան՝ ի մասին այն խտտութիւն-  
ներուն որոնք ի գործ կը գրուին Քօսովայի,  
Մանասթըրի, Սելանիկի ու Ալքիանուպոլսոյ  
նահանգներուն մէջ: Պուլկար կառավարու-  
թիւնը կը պարտադրէ Դրան՝ զպրեզնիտը այդ  
միջոցները, յուսալով որ աւելի բարեկամա-  
կան յարաբերութիւններ պիտի կրնան հաս-  
տատուիլ երկու երկիրներուն միջև ու ապա-  
հովել այս կերպով խաղաղութեան պահպա-  
նումը:

Պուլկար կառավարութիւնը կոչում պիտի  
ընէ նաև աւերութեանց, խնդրելով անոնց  
աջակցութիւնը բարեկաւելու համար կացու-  
թիւնը: Դահլիճը մեծ փոյթ ցոյց կուտայ փա-  
րատելու բոլոր կասկածները, որոնք կրնային  
գոյութիւն ունենալ Բեթրսպուրիի մէջ:

### ՄԱԿԵԴՈՆԻՍ

Մակեդոնիոյ զանազան մասերուն մէջ  
մակեդոնացի պուլկարները միշտ և շարու-  
նակ կը ձերբակալեն: Ընդհ. Քննիչ Հիւ-  
սէյին Հիլմի բաշան վերջերս Կ. Պոլիս զըր-  
կեց տեղեկագիր մը, որուն մէջ երեք պա-

սակարդի կը բաժնէ մակեդոնացի բանասար-  
կեալները: Կ'առաջարկէ զատի բաշել այն  
անձերը, որոնց մեղսակցութիւնը վերջին  
զէպրերուն մէջ անվիճելի է. առանց ապա-  
ցոյցի կասկածեալները, կ'ըստի, պիտի աք-  
սորւին Անատոլի, ուր պիտի կրեն վիճակը  
Սիպրիոյ աքսորականներուն:

Նուազ կասկածեալները պիտի արձակուին  
ու տեղերնին պիտի զրկուին, բայց միշտ  
օստիկանութեան հսկողութեան ներքև պի-  
տի մնան: Հիլմի բաշան ուրիշ ծրագիր մ'ալ  
ունի եղեր. Անատոլի մէջ կ'ուզէ հաս-  
տատել զաղթականութիւն մը մակեդոնացի  
մեծ թիւով պուլկարներով, Մակեդոնիոյ քա-  
նի մը գաւառներուն մէջ ասոնց թիւը պակ-  
սեցընելու նպատակով: Բայց կը տարակուսի  
թէ տէրութիւնները թող տան գործադրելու  
ասանկ ծրագիր մը:

Պուլկար սահմանապիտի պահպանները  
վերջերս Սօփիա լուր զրկած էին թէ՛ թուր-  
քերը պատրաստութիւններ կ'ընէին զբաւելու  
համար Տօրմուշէլօյի ու Սիլքօլօի ուղղմա-  
գիտական կէտերը: Պուլկար կառավարու-  
թիւնը, բաւականաչափ ուժեր հոս կեղրո-  
նացընելէ վերջ, իմաց տուաւ Կ. Պոլսոյ  
իշխանութեանց որ սահմանապիտէն անցնելու  
ամեն փորձ՝ զէնքի ուժով պիտի ետ մղուի:

Թուրք իշխանութիւնները չ'են զուլ տար  
երբեք իրենց խտտութիւններուն: Կը ծա-  
նուցուի թէ Ճումայի ու զրացի զիւղե-  
րէն ամբողջովին անհետացած է պուլկար ժո-  
ղովուրդը: Մէկ քանիները բանտարկուած  
եւ սպաննուած են, միւսները լեռները քա-  
շուած: Ռազլօի գաւառակին պաշարումը կը  
տեւէ զեռ ու տունները թալլուեցան: Միկնայն  
վիճակը կը տիրէ Բալանքա ու Տէմիրհիսար  
գաւառակները, ուր բնակիչներուն մեծ մասը  
լեռները քաշուեցաւ: Այսպէս, քաղաքային  
ու զինուորական իշխանութիւնները կուրօքն  
կը ծառայեն յեղափոխներուն զիտուսներուն,  
ժողովուրդը մղելով յուսահատութեան ու նոր  
յաւելումներ ընել տալով հրոսախմբերուն:  
Նէվրօքօք գաւառակէն 55 զաղթողներ սահ-  
մանապիտէն անցան: Իսկ Նէվրօքօք քաղա-  
քը զեռ պաշարուած է զօրքերէն. մեծ թի-  
ւով մարդեր բանտարկուեցան. հինգը աք-  
սորի, իսկ միւսները Սելանիկ զրկուեցան,  
ուր պիտի դատուին:

### ՀԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Հօգան, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական դաստիարակութեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս՝ առանց ու եւ է վճարումի՝ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրակաւն առաւելութիւններուն, անմրցելի կերպով չափաւոր է:

Հայ ծնողներու համար մուսնաւոր պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատանս յայտագիրն ամեն ուզողի կը զրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Տըքթ. ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ուսուցիչ

### ՕԹԷԼ ՊՐՈՒՍԱ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ ՄԱՆՉԵՆԻ ՓՈՂՈՑ  
ՕԹԷԼ ՊՕՆԱՐԻ ԵՏԵԻ

Քաղաքիս մէջ միակ մարտը, ընդարձակ, ծավեղ երիայ, օգասուն ու միակ շէնդ հայ օթէլն է՝ Պրուսա օթէլը ուր ճամբորդը կը գտնէ ամեն կերպով հանգստութիւն:

Այս նորահաստատ հայկական հիւրանոցին համար ս'ըբան ալ գովեստը լայ, քիչ է:

Ամեն ճամբորդ որ Ալեքսանդրիա կ'ելլէ, թո՛ղ ինչէ՛ Պրուսա օթէլը Մանչինի փողոց, Օթէլ Պօնարի ետին:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԲՍՇՃԵԱՆ

Աթթարինի մեծ փողոցին վերի ծայրը աջ կողմի թիւ 82 խանութը.

Փայա, Փայտածուխ, Քարածուխ, Քարիւղ, Սփիրթօ, ևն:

Մեծաբանակ ու փոքրաբանակ վաճառում.

Յանձնարարութիւնները կը կատարուին անմիջապէս, յաճախորդներուն բնակարանները յանձնուելու պայմանով:

Խանութը միշտ բաց է առաւօտեան ժամը 6 1)2 էն մինչև երեկոցեան ժամը 8:

Ճշգրտակալութիւն, արդար կշիռք և աժանութիւն:

ԳՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Դիմեցէք և Փորձեցէք

Աղգարինի վերջին ծայրի աջ կողմը թիւ 82 խանութը:

### ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԻԻՆԻԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիսէն հրատարակուի Աղեքսանդրիա, նոյն ուղղութեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի Խմբագիր-Տնօրէնն է ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ, որուն պիտի աշխատակցին երկու օգնական-խմբագիրներ ու մէկէ աւելի թղթակիցներ:

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամսոյ սկիզբէն և կէսէն:

Չեղքէ կը ծախուի հատը հինգ միլլիմի:

ԵՌԱՄՍ . ՎԵՑԱՄՍ . ՏԱՐԵԿ .

Եզրպտոս զրշ.	30	60	120
Արտասահման ֆր.	10	20	40
Ամբերիա տոլար	2	4	8
Կովկաս սուրբ	4	8	16

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպայի հայ Ուս. Միութեան Ազատ Գրադարանի վերջին հրատարակութիւններէն ստացած ենք հետեւեալները.

Ապոստոլ Սասունը, Հայրենասերի սաղէտը, Հայոցհիւներին ու Հերոսը: Այս չորս գրքոյկներն ալ պէտք է որ գանուին ամեն հայու ձեռքը:

Հայրենասերի Տաղերը գրքոյկը կը պարունակէ անմահ Նալբանդեանի երգերուն ընտրելագոյնները: Միւս գրքոյկները յուզիչ պատկերներ են յեզափոխական կեանքէն: Իւրաքանչիւր գրքոյկը կը վաճառուի 1 դր. ողջի:

### ԶԵԹՈՒՆՑԻՆ

ԶԵԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԷՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԷՆ

Բ. ՆԱՏՈՐ

ԲԱՐԻՉ

Գին 10 դր. ողջ Եզիպտոսի համար

Գիմել «Սխառան» տպարանը

### ԱՌԻԹՆ Է

Մեկնուի պատճառով ծախու գրուած է հոյակապ պորտալո Դաշնակ լը Տիար Ճ. Բաբալեանի քով, Ռոզէլ փողոց, 7:

Ատի՛ թն է, Ատի՛ թն է, Ատի՛ թն է:

### ՀԱՄԲԱՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԴԵՐՁԱԿ

Աքքարիկի ձգկիթիկն դիմաց Մեծ Մկրտչոյ խանութը

կը գործածէ՝ սովորաբար անգլիական ու ֆրանսական տակուն ու ազնիւ կերպանները, չափաւոր գներով, գոհացնելով մինչև իսկ ամենէն նրբաճաշակ յաճախորդներն ու յարգելով իրենց ամենափոքր զիտողութիւնները: Կը պատրաստէ, ի պահանջել հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ գոտիւմ մը:

Հարիւր գրուչի առևտուրի փոխարէն յաճախորդը կ'ստանայ հարիւր հատ վաճառականական գրոշմաթուղթ, որ հոս կը ծախուի: Գիմեցէք Մեծ Մկրտչոյ խանութը:

Ա Ջ Պ

Թէլեֆոն 33

Նամակատուի թիւ 398

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ • ԳՈՋԱՐՆԵՐ • ԱԴԱՄԱՆԳՆԵՐ • ԱԿՆՈՑՆԵՐ

## L. KRAMER & C<sup>o</sup>

Հայրապետի Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ • ԳԱՋԻԻԷ • ԵԳԻՊՏՈՍ

ԳՈՐԾԱՏՈՒՆ ԳՈՂԱՔԵՂԵՆԱՅ

Աղեփասնորիս, Տպարան ՍԻՍՈՒԱՆ